YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2022 թ. հունվարի 18-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

ՀՀ, ք. Երևան 18.01.2022 թ.

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 17-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Նիստը նախագահում էր ՀԽ նախագահ Սուրեն Պապիկյանը, քարտուղարում՝ ՀԽ քարտուղար Եղիշե Կիրակոսյանը:

Ներկայացված օրակարգը՝

1. ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը 2020-2021 ուստարվա «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ:
Զեկուցող՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
Զեկուցող՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի կառուցվածքի հաստատում:

Զեկուցող՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի հաստիքացուցակի հաստատում:

Զեկուցող՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ հայտի հաստատում և ներկայացում:

Զեկուցող՝ ռեկտոր Հ. Հովհաննիսյան

6. Ընթացիկ հարցեր:

1. ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը 2020-2021 ուստարվա «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ: ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը Հոգաբարձուների խորհրդի անդամներին ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում տարբեր ուղղություններով իրականացված ծրագրերը, գրանցած արդյունքները և արված աշխատանքները:

Ռեկտորի ելույթից հետո նրան հարցեր ուղղեցին ԵՊՀ ՈւԽ նախագահ Դավիթ Ափոյանը, Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Մխիթար Հայրապետյանը: Հարցերն առնչվում էին ինչպես ուսումնական գործընթացին, այնպես էլ առաջիկա ծրագրերին:

ԵՊՀ ռեկտորի՝ 2020-2021 ուստարվա «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ հաշվետվությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով՝

1. Հավանություն տալ 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020-2021 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում: Հ. Հովհաննիսյանը ՀԽ անդամներին տեղեկացրեց, որ ԵՊՀ 2022 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը դեֆիցիտային է, որի լրացման աղբյուրը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարիների ընթացքում կուտակված դրամական միջոցների մնացորդն է: Նա նշեց, որ նախահաշիվը ներկայացված է համախմբման եղանակով, այսինքն՝ ԵՊՀ-ի և Իջևանի մասնաճյուղի նախահաշիվները համախմբված են: Նրա խոսքով, նախորդ տարիներին դրանք ներկայացվում և հաստատվում էին առանձին-առանձին: Հ. Հովհաննիսյանն ասաց, որ համախառն եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 15 %-ով: Նա փաստեց, որ ԵՊՀ եկամուտների ավելացման հիմնական աղբյուրները հանդիսացել են պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական դրամաշնորհային ծրագրերը և բանկից ստացվող տոկոսային եկամուտները:

Նախահաշվի ներկայացումից հետո ԵՊՀ ռեկտորին հարցեր ուղղեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանը՝ հետաքրքրվելով տարբեր կետերով սահմանված ծախսերի փոփոխությունների առնչությամբ: Դրանց վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Հ. Հովհաննիսյանը և Հաշվապահական հաշվառման վարչության պետ, գլխավոր հաշվապահ Ռաֆիկ Գրիգորյանը:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը դրվեց քվեարկության. կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 7-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի կառուցվածքի հաստատում: Հ. Հովհաննիսյանը Հոգաբարձուների խորհրդին ներկայացրեց ԵՊՀ կառուցվածքում փոփոխություններ կատարելու գիտական խորհրդի առաջարկությունը, որը հաստատվել էր հունվարի 14-ին տեղի ունեցած

ԳԽ նիստի ժամանակ: Ներկայացնելով փոփոխությունների առաջարկը՝ ԵՊՀ ռեկտորը նշեց, որ դրանք կնպաստեն բուհի գործունեության առավել արդյունավետ իրականացմանը:

Կառուցվածքային ստորաբաժանումների փոփոխությունների վերաբերյալ ԵՊՀ ռեկտորին հարցեր ուղղեցին ԵՊՀ ուսանող Խաչիկ Աբաջյանը, Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ Մխիթար Գաբրիելյանը և Հ. Արշամյանը:

Ներկայացված փոփոխությունների առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-6-րդ ենթակետերով՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը բաժանման եղանակով վերակազմակերպել «Անձնակազմի կառավարման բաժին» և «Իրավաբանական ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումների:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Մինչհամալսարանական կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Դոկտորական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Շարունակական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:

6. Ստեղծել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ռազմավարական պլանավորման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

7. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ» կառուցվածքային ստորաբաժանումը:

8. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ««Տավուշ» հետազոտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի հաստիքացուցակի հաստատում: Հ. Հովհաննիսյանը նշեց, որ նախապես ներկայացված հաստիքացուցակով սահմանվել էր նաև աշխատավարձերի բարձրացում, որը նախատեսվում էր իրականացնել խնայողությունների հաշվին: Նա ասաց, որ այս ընթացքում բազմաթիվ հաստիքներ կրճատվել են, որոնց հաշվին ևս խնայողություններ են արվել: ԵՊՀ ռեկտորը նշեց, որ քննարկումների արդյունքում հանգել են եզրակացության, որ խնդիրն առավել համակարգային և ինստիտուցիոնալ լուծելու համար կսահմանվեն որոշակի լրավճարներ, որոնք կբերեն համահարթեցման:

Նա առաջարկեց հաստիքացուցակով սահմանված վարչական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատավարձերը հաստատել 2021 թվականի համամասնություններով, իսկ լրավճարները՝ ներկայացված տեսքով:

Բացի դրանից՝ ԵՊՀ ռեկտորն առաջարկեց ներկայացված տարբերակով հաստատել նաև «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի կենտրոն», «Ռազմավարական պլանավորման կենտրոն» և «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումների աշխատավարձերը:

Ներկայացված առաջարկների վերաբերյալ ծավալվեց քննարկում: ՀԽ նախագահ Ս. Պապիկյանն ասաց, որ լավ աշխատանքը պետք է լավ վարձատրվի, բայց դա պետք է բավարար քննարկումների փուլով անցնի: Նա առաջարկեց հապշտապ որոշում չկայացնել, այլ ծավալել քննարկում՝ հաջորդ նիստին առավել պատրաստված ներկայանալու համար:

Դ. Ափոյանն առաջարկեց ձևավորել հանձնաժողով կամ աշխատանքային խումբ, որը ռեկտորատի հետ կքննարկի աշխատավարձերի վերաբերյալ առաջարկվող փոփոխությունները և կներկայացնի Հոգաբարձուների խորհրդի անդամներին:

Ս. Պապիկյանն առաջարկեց աշխատանքային խմբում ներառել Մխիթար Հայրապետյանին, Վարուժան Աթաբեկյանին և Դավիթ Ափոյանին:

Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Այնուհետև քվեարկության դրվեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2022 թվականի հաստիքացուցակի հաստատման հարցը՝ խմբագրված տարբերակով. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի հաստիքացուցակը և կառուցվածքը:
2. Հաստիքացուցակով սահմանված վարչական կառուցվածքային ստորաբաժանումների աշխատավարձները հաստատել 2021 թվականի համամասնություններով, իսկ լրավճարները՝ ներկայացված տարբերակով:
3. «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի կենտրոն», «Ռազմավարական պլանավորման կենտրոն» և «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումների աշխատավարձները հաստատել ներկայացված տարբերակով:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ հայտի հաստատում և ներկայացում: Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հարցը ներկայացվում է՝ համաձայն կառավարության որոշման:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցերի շրջանակում հնչեցին աշխատանքային տարբեր դիտարկումներ և դրանց պարզաբանումներ:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ե. Կիրակոսյան**